

«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակում պետական աջակցության տրամադրման, ինչպես նաև շահութահարկով հարկման բազայի որոշման համար բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված պաշտոնների համապատասխանության վերաբերյալ իրազեկում

2025թ. 1-ին եռամսյակի բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության տրամադրման մասով

«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված է օրենքի իմաստով «մասնագիտական աշխատանք» եզրույթը, որը ներառում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման (այսուհետև՝ որոշում) հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքներով զբաղվող անձնակազմի մասնագիտական աշխատանքը:

Օրենքով նախատեսված աջակցությունը 1-ին եռամսյակի համար ստանալու դեպքում բավարար պայման է, որպեսզի աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրում աշխատողի զբաղմունքը, պաշտոնը և աշխատողի աշխատանքային պարտականությունները բովանդակային առումով համապատասխանեն Որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված զբաղմունքին, պաշտոնին:

2025 թվականի 2-րդ եռամսյակից սկսած և հետագա եռամսյակների համար բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության տրամադրման մասով

2025 թվականի 2-րդ եռամսյակից սկսած և հետագա եռամսյակների համար օրենքով նախատեսված պետական աջակցության տրամադրման դրույթի կիրառման համար բավարար պայման է, որպեսզի աշխատողի մասով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի «Վարձու աշխատողի, պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի, փորձնակի և մասնագիտական ուսուցում անցնող աշակերտի անհատական տվյալների գրանցման հայտի ձևը հաստատելու մասին» N 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում լրացված լինի գործատուի և աշխատողի միջև կնքված

աշխատանքային պայմանագրում նշված պաշտոնը և/կամ վերջինիս կողքը, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված պաշտոններին:

Այն դեպքում, երբ աշխատողը գործատուի մոտ փաստացի իրականացնում է ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանք և երբ գործատուի և աշխատակցի միջև կնքվի լրացուցիչ համաձայնագիր, որով հստակ կամրագրվի, որ աշխատանքային պայմանագրում սահմանված աշխատողի զբաղմունքը, պաշտոնը և աշխատանքային պարտականությունները բովանդակային առումով համապատասխանում են ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված կոնկրետ զբաղմունքին, պաշտոնին, ապա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի թիվ 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված պաշտոնը:

Հետևաբար, 2025 թվականի 2-րդ եռամսյակից սկսած՝ օրենքով նախատեսված պետական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ է, որ մինչև 2025թ. մայիսի 31-ը աշխատողի մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի N 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում լրացված լինի գործատուի և աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրում, կամ, **հիմնավորված դեպքերում**, գործատուի և աշխատողի միջև կնքված համաձայնագրում նշված պաշտոնը և/կամ վերջինիս կողքը, որը կհամապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված պաշտոններին:

Մինչև 2025թ. մայիսի 31-ը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի N 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում ՀՀ կառավարության N 353-Ն որոշման հավելվածով սահմանված պաշտոններին համապատասխանող և

աշխատանքային պայմանագրում նշված պաշտոնը և/կամ վերջինիս կողը լրացնելու դեպքում, փոփոխությունն աջակցությունների մասով իրավահարաբերություններում դիտարկվում է որպես 2025թ. ապրիլի 1-ից կատարված փոփոխություն:

Շահութահարկով հարկման բազայի որոշման մասով

2025 թվականից սկսած և հետագա տարիների համար Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթի կիրառման համար բավարար պայման է, որպեսզի աշխատողի մասով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի «Վարձու աշխատողի, պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի, փորձնակի և մասնագիտական ուսուցում անցնող աշակերտի անհատական տվյալների գրանցման հայտի ձևը հաստատելու մասին» N 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում լրացված լինի գործատուի և աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրում նշված պաշտոնը և/կամ վերջինիս կողը, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված պաշտոններին:

Այն դեպքում, երբ աշխատողը գործատուի մոտ փաստացի իրականացնում է ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանք և երբ գործատուի և աշխատակցի միջև կնքվի լրացուցիչ համաձայնագիր, որով հստակ կամրագրվի, որ աշխատանքային պայմանագրում սահմանված աշխատողի զբաղմունքը, պաշտոնը և աշխատանքային պարտականությունները բովանդակային առումով համապատասխանում են ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված կոնկրետ զբաղմունքին, պաշտոնին, ապա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի թիվ 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված պաշտոնը:

Հետևաբար, 2025 թվականից սկսած՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արտոնության կիրարկման համար անհրաժեշտ է, որ մինչև 2025թ. մայիսի 31-ը աշխատողի

մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի N 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում լրացված լինի գործատուի և աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրում, կամ, **հիմնավորված դեպքերում**, գործատուի և աշխատողի միջև կնքված համաձայնագրում նշված պաշտոնը և/կամ վերջինիս կողը, որը կբավարարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 353-Ն որոշման հավելվածով սահմանված բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտական աշխատանքների ցանկում ներառված պաշտոններին:

Մինչև 2025թ. մայիսի 31-ը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2012 թվականի հունիսի 26-ի N 197-Ն հրամանով հաստատված ձևի 4.1.3 սյունակում ՀՀ կառավարության N 353-Ն որոշման հավելվածով սահմանված պաշտոններին համապատասխանող և աշխատանքային պայմանագրում նշված պաշտոնը և/կամ վերջինիս կողը լրացնելու դեպքում, փոփոխությունն աջակցությունների մասով իրավահարաբերություններում դիտարկվում է որպես 2025թ. հունվարի 1-ից կատարված փոփոխություն: